

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 149

Ընտրութիւն եւ դատապարտութիւն – Մարդկութեան վերաբերեալ, նախասահմանութեան աստուածաշնչային վարդապետութիւնը ունի երկու մասեր, քանի որ այն ներառում է ոչ միայն ընտրութեան վարդապետութիւնը՝ այսինքն Աստուծոյ որոշ մարդկանց ընտրութիւնը դէպի փրկութեան, բայց նաեւ դատապարտութեան վարդապետութիւնը՝ այսինքն Աստուծոյ մնացած մարդկութեան վրայից անցնելու որոշումը դէպի դատաստան (Ուէտմինստրը Հաւատոյ Հանգանակ, Գլուխ 3, Բաժին 3): Նախասահմանութեան նախագիտակ տեսանկիւնը մերժում է նախասահմանութեան վարդապետութեան երկրորդ կամ ժխտական որեւէ կողմը, ուսուցանելով թէ Աստուծոյ նախասահմանութիւնը կախեալ է Աստուծոյ նախագիտութեան թէ մարդը ինչպէս կ'պատասխանի աւետիսը՝ լաւ թէ վատ: Ուստի նրանք ունեն նախասահմանութեան այսպէս միակողմանի տեսանկիւն:

Կրկնակի նախասահմանութիւն – Նախասահմանութեան Վերակազմ տեսանկիւնը հաստատում է նախասահմանութեան երկու կողմերը՝ դրականը ու ժխտականը, ընտրութիւն եւ դատապարտութիւն: Նրանց որ Աստուած ընտրում է դէպի փրկութիւն ընտրեալներն են՝ ուստի ընտրութեան վարդապետութիւնը. եւ նրանց որ Աստուած թողնում է դէպի դատաստան դատապարտեալներն են՝ ուստի դատապարտութեան վարդապետութիւնը: Եւ եթէ ոմանք ընտրեալներ են ապա փաստօրէն ուրիշները (մնացորդը) ոչ-ընտրեալներ են, եւ ուրեմն նախասահմանութիւնը տրամաբանօրէն եւ անխուսափելիօրէն պիտի լինի կրկնակի: Ուրեմն, նախասահմանութեան Վերակազմ վարդապետութիւնը երբեմն ճանաչւած է որպէս կրկնակի նախասահմանութիւն: Թէպէտ Աստուածաշունչը չի խօսում դատապարտութեան վարդապետութեան մասին այդ քան ինչ քան որ խօսում է ընտրութեան վարդապետութեան առջիւ, բայց եւ այնպէս այն յստակօրէն ուսուցանում է այդ (Մատթէոս 11:25-26, Հռովմայեցիս 11:7-8, Ա. Պետրոս 2:7-8, Յուդա 1:4): Ասելով այս, կրկնակի նախասահմանութեան արտայայտութիւնը յաճախ սխալ է հասկացել եւ սխալ է բացատրել. ուստի խիստ կարեւոր է հասկանալ այս սուրբ գրայինօրէն, եւ բացատրել այս ճշգրիտօրէն:

Ոմանք կրկնակի նախասահմանութիւնը բացատրում են որպէս Աստուած գործելով հաւասարապէս եւ նոյն կերպով թէ ընտրեալների փրկութեան եւ թէ դատապարտեալների դատաստանի նկատմամբ: Այս տեսանկիւնը սովորեցնում է որ ճիշտ այնպէս որ Աստուած գործում է ուղղակիօրէն որոշ մեղաւորների վրայ՝ ընտրեալների վրայ, հաւատքի բերելով նրանց որպէսզի իրականացնի դրանց ընտրութիւնը, նոյնպէս էլ Նա գործում է ուղղակիօրէն մնացորդ մեղաւորների վրայ՝ դատապարտեալների վրայ, հաւատքից ետ պահելով նրանց որպէսզի իրականացնի դրանց դատապարտութիւնը: Ուստի այս բացատրում է նախասահմանութեան մի համաչափ տեսանկիւն, հաստատելով Աստուծոյ միջամտութեան մի դրական-դրական գաղափար: Այս գաղափարը սովորաբար ընդունւած է չափազանց-Քալվինականների կողմից, եւ յաճախ օգտագործում է ուրիշների կողմից որպէսզի ծաղրանկարել Վերակազմ տեսանկիւնը: Մակայն, այս չէ պատմականօրէն ընդունւած կրկնակի նախասահմանութեան Վերկազմ վարդապետութիւնը: Վերակազմ տեսանկիւնը ուսուցանում է որ թէպէտ Աստուած հրովարտակում է ոմանց դէպի փրկութիւն եւ ուրիշներին դէպի դատաստան, եւ թէպէտ Նա գործում է ուղղակիօրէն եւ դրականապէս ընտրեալ մեղաւորների վրայ որպէսզի կատարելագործի դրանց ընտրութիւնը, սակայն Նա չի գործում ուղղակիօրէն եւ դրականապէս ոչ-ընտրեալ մեղաւորների վրայ որպէսզի կատարելագործի դրանց դատապարտութիւնը: Այս տեսանկիւնը հաստատում է Աստուծոյ միջամտութեան մի դրական-ժխտական գաղափար:

Նրանց որ Աստուած անցեալի յախտեանկանութեան մէջ ընտրել է դէպի փրկութիւն, Նա ժամանակում միջամտում է դրականապէս որպէսզի նրանց վերածնի հոգեւոր մահից դէպի հոգեւոր կեանք՝ փրկելով նրանց իրենց պիղծ վիճակից եւ այդպիսով իրագործի դրանց փրկութիւնը: Բայց նրանց նկատմամբ որ Նա չի ընտրել, Նա չի միջամտում դրականապէս, փոխարէն Նա ժխտականօրէն անցնում է նրանց վրայից, թողնելով նրանց իրենց հոգեւորապէս մեղսալի վիճակում: Աստուած չի ստեղծում մեղք կամ անհաւատութիւն նրանց մէջ որպէսզի նրանք դատապարտուեն, քանի որ նրանք արդէն մեռած են իրենց մեղքերում եւ յանցանքներում, լինելով արդէն դատապարտուած վիճակում (Յովհաննէս 3:18): Ուրեմն Վերակազմ տեսանկիւնը մերժում է նախասահմանութեան երկու կողմերի համաչափ կամ հաւասար գաղափարը, ճշգրիտօրէն սահմանելով ընտրութեան եւ դատապարտութեան միջեւ եղած տարբերութիւնները, ցուցադրելով թէ Աստուած չի աշխատում հաւասարապէս դրանց մէջ (Հռովմայեցիս 9:18): Ընտրութիւնը հաստատուած է Աստուծոյ շնորհքում, իսկ դատապարտութիւնը հաստատուած է Նրա արդարութեան մէջ:

Ոմանք վիճում են ասելով թէ Աստուածաշունչը ուսուցանում է թէ Աստուած ժողովրդի սրտերը խստացնում է որպէսզի նրանք չհաւատան (Ելից 7:3, 13, Յեսու 11:18-20, Եսայիա 6:10, Յովհաննէս 12:40), բայց այս չի նշանակում որ Աստուած ստեղծում է մի չար տրամադրութիւն կամ հակում ժողովրդի սրտերում ու կամքերում որոնք եթէ այդպէս չլինէր կ'հաւատային Նրան. այլ Նա պատժում է նրանց իրենց արդէն չար սրտերի եւ ճանապարհների համար, ու պարզապէս մի կողմ է քաշում եւ թուլացնում է (ետ է քաշում) Իր շնորհքի ցանկապատը, մատնելով նրանց իրենց պղծութեանը (Մաղմոս 81:10-12, Հռովմայեցիս 1:24-28): Ար Սի Սփրոլը բացատրում է թէ՛ «Երբ լքում է ժողովրդին, Աստուած լքում է նրանց իրենց անձերին: Ոչ միայն չի խլում նրանց ազատ կամքը, ընդհակառակ նա յանձնում է նրանց իրենց ազատ կամքին, որով նրանք ընտրում են կատարել իրենց սրտերի չար ցանկութիւնները»: